Մեծամոր համայնքի հարգելի՛ բնակիչներ,
Շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի առաջին հանրապետության օրվա առթիվ:
Մայիսի 28-ը հայ ժողովրդի կյանքում նշանավորվեց որպես հայոց պետականության վերածննդի խորհրդանիշ: Այս օրը վառ ապացույցն է մեր ժողովրդի միասնականության, անկոտրում կամքի, հավատի, որով կարողացանք իրականություն դարձնել պետականություն ունենալու դարավոր ձգտումը: Այն ժամանակաշրջանում, երբ կասկածի տակ էր դրված ոչ միայն մեր պետականություն ունենալու այլ նաև լեզուն, ինքնությունը, մշակույթը պահպանելու հարցը, մենք կերտեցինք փառապանծ հաղթանակ Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերում, որոնք դարձան մեր պատմության լուսապսակը:
Սիրելի՛ բնակիչներ,
Կրկին շնորհավորում եմ բոլորիս Հանրապետության տոնի առթիվ, մեր ժողովրդին ցանկանում եմ երջանկություն, հայրենիք կերտելու և հզորացնելու մեծ պատրաստակամություն, մեր երկրին՝ խաղաղ երկինք և վերելք:
Փա՛ռք Հայաստանի Հանրապետությանը,
Փա՛ռք հայրենիքի համար զոհված մեր հերոսների հիշատակին: